

(15 նոյ. 1886) անգլոգական Պօլտեցին **Արսէն Այսրենեան** որ քառօրդ դար արուակալեց և երբ վախճանեցաւ 21 Յուլիս 1902 ին, 6 տարի տեղակալ մնաց **Հ. Թաղեա թօռնեան**, մինչև ընտրուի ընդ նոր Արքանօր (18 Յուլիս 1909), Սամօշույ վառ.ցի **Գրիգոր Գովրիկեանի**: Ասոնց ամենո՛ւն ալ օրով հետզհետէ բարգաւաճած է Միարանուի ինը, երբեմնի խարխուլ վանքին ու ժամին տեղ՝ կառուցուելով հոյակերտ արքայարան, վարժարան, մատենադարան, տաճար՝ միշտ Վենսպետէն հովանաւորած ու նպաստաւորեալ: Վիեննականք այսպէս զարկ տուած են կրթական ու գրական գործին, մասնաճիւղեր ալ հաստատելով Արեւելքի մեջ: Միայն 1870ի պատերազմին հետեւանօք էր որ հարկադրուած են ձեռքէ հանելու շատ մը ստացուածք, ընդ որս և տպարաննին գոր Այտրնեան վերագնած է 1887 ին: — Իրենց Ա. օտկանն է եղած **Մարտա** շարքարքերը (1847 - 63): 24 տարուան դադարէ մը վերջ՝ 1887 ին սկսած են հրատարակել **Հանգէս Ամսօրեայն**, տարուէ տարի լրջացունելով և դարձունելով գլուս հայագիտական ուսումնասիրք մը: — Բաց ի իրենց հովուապետներէն, ի՛նչ հոյակապ դէմքեր



ԳՐԱՏԱՐԱՆԵՐՈՒ Ա. ԸՆԴԱՐԱՅԿ ՍՐԱՆԸ (Բ. ԴՍԵԿՈՆ) ԵՒ ՓՈՐՁԵՐՈՒ ՄԱՄՈՒԸ (ՁԵՌՆԱՏԱՐԺ)

սա անձինք՝ յաջս Հայ Մատենագրութեան. — Յովնանեան, Գաբրըճեան, Գարագաշեան, Սիպիլեան, Տերվիշեան, Ալեքեան, Գովրիկեան, Գալեմքեարեան, Տաշեան, Մենեվիշեան, Ակիլեան ևն., իրենց ուրոյն գործերով ու գործքերով աւելցունելով փառքը նոյն Ախաթին:

* * 1811 ին տպարաննին բանելու վրայ էր արդէն՝ մասամբ Թրիքսիէն հրաշքով տպչուրած տառերով և մամուլի մը շնորհիւ: Հ. Ազարեան տպարանապետն էր, իսկ բանուորներն օտարազգի էին: Յաջորդ տարին լոյս ընծայուեցաւ Ա. գիրքը, **Վարդ Ամենասուրբ Կուսին Մարիամու Ա.ձ.ածնի**: Կար 2 փայտէ մամուլ. 23 տարի յետոյ այս թիւը 15 ի բարձրացած էր, իսկ 3 տարիէն՝ 19 ի: Հիմալ նոյն տպարանն ունի երկարէ: 5 մեծ և 8 փոքր արագատիպ. 1855-1901 շրջանին՝ շոգեշարժ, այնուհետեւ ելեկտրաշարժ: 1838 ին ձուլարան մըն ալ հիմնուեցաւ՝ ուր պատրաստուեցան մալր տառեր և բաժուեցան հայ և օտար այլազան գիրքեր: — 8 Ապրիլ 1848 ի գիշերը տեղացի նախանձորդ տպագրիչներ — Հայուն յաջողութեան սխերիմ — չեն խզկիր վատ յարձակում մը գործելու Միսիրսեանց տպարանին վրայ, պատուհաններ քարկոծելով և դուռը բռնի բանալ փորձելով: Առիւծասիրտ պանակներ կ'ընդդիմա-